Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
հոկտեմբերի 5-ի N 1235 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գործարար ծրագրերի հավանության արժանացման և այդ ծրագրի շրջանակներում ստեղծված նոր աշխատատեղերի մասով լրացուցիչ աշխատավարձի ու դրան հավասարեցված վճարումների հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով՝

1) աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ են համարվում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությանը համապատասխան որոշակի ժամկետով և անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագրերի, ինչպես նաև աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի շրջանակներում կատարվող հետևյալ վճարումները (վարձատրությունը)՝

ա. աշխատավարձը (հիմնական աշխատավարձ, լրացուցիչ վարձատրություն), այդ թվում՝ արտաժամյա աշխատանքի վարձատրությունը, գիշերային աշխատանքի վարձատրությունը, հանգստյան և ոչ աշխատանքային (տոնական և հիշատակի) օրերին կատարված աշխատանքի վճարումը, լրավճարները, հավելումները, հավելավճարներն ու պարգևատրումները, լրացուցիչ և հատուկ ընդմիջումների վճարումը, առողջության ստուգման համար ծախսվող ժամանակի համար վճարումը (եթե աշխատողի առողջության ստուգումը պարտադիր է և պայմանավորված է աշխատանքի բնույթով).

բ. ամենամյա (նվազագույն, երկարացված, լրացուցիչ) և նպատակային (ուսումնական, պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար) վճարովի արձակուրդի գումարները.

գ. հեղինակային վարձատրությունը (բացառությամբ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 34-րդ մասով սահմանված ռոյալթիների).

2) գործարար ծրագրի մեկնարկը համարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված ժամկետը.

3) նոր աշխատատեղեր են համարվում արտոնության տրամադրման հարկային տարվա աշխատողների միջին տարեկան քանակի և ծրագրի մեկնարկին նախորդող հարկային տարվա աշխատողների միջին տարեկան քանակի դրական տարբերությունը: Աշխատողների միջին տարեկան քանակը որոշվում է տվյալ հարկային տարում յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ աշխատողների քանակների հանրագումարը հարաբերելով 12-ի, իսկ տվյալ տարում նոր ստեղծված ռեզիդենտի համար աշխատողների միջին տարեկան քանակը որոշվում է ստեղծման օրվանից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ աշխատողների քանակների հանրագումարը հարաբերելով ռեզիդենտի ստեղծման օրվանից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի ամիսների (այդ թվում՝ ոչ ամբողջական ամիսների) թվի վրա: Եթե ռեզիդենտն ստեղծվել է դեկտեմբեր ամսին, ապա աշխատողների միջին տարեկան քանակ է համարվում այդ հարկային տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ ռեզիդենտի մոտ առկա աշխատողների քանակը.

4) լրացուցիչ աշխատավարձ է համարվում սույն կետի 3-րդ ենթակետում նշված՝ արտոնության տրամադրման հարկային տարվա աշխատողների միջին տարեկան քանակի և ծրագրի մեկնարկին նախորդող հարկային տարվա աշխատողների միջին տարեկան քանակի դրական տարբերության և արտոնության տրամադրման հարկային

տարվա միջին տարեկան աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների արտադրյալը: Միջին տարեկան աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները որոշվում են արտոնության տրամադրման հարկային տարվա ընթացքում վճարված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հանրագումարը հարաբերելով այդ հարկային տարվա աշխատողների միջին տարեկան քանակի վրա:

3. Գործարար ծրագրի մեկնարկման ու դրան հաջորդող հինգ հարկային տարվա շահութահարկի գումարը նվազեցվում է գործարար ծրագրի շրջանակներում ստեղծված նոր աշխատատեղերի մասով համապատասխան տարվա ընթացքում հաշվարկված լրացուցիչ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների 100 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան համապատասխան հարկային տարվա համար հաշվարկված փաստացի շահութահարկի գումարի 30 տոկոսը:

4. Գործարար ծրագրի հավանության ստացման համար գործարար ծրագիր իրականացնող ռեզիդենտ շահութահարկ վճարողը գրավոր կամ էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ է ներկայացնում դիմում՝ գործարար ծրագրի մեկնարկումից առնվազն մեկ ամիս առաջ:

5. Դիմումին կից ներկայացվում է գործարար ծրագիրը և ռեզիդենտ շահութահարկ վճարողի տնտեսական գործունեության մասին տեղեկատվություն ՝ համաձայն NN 1 և 2 ձևերի:

6. Դիմումը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմում մուտքագրվելու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարությամբ, ներկայացվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ կարծիք ստանալու համար, և Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն՝ եզրակացություն ստանալու համար:

7. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում են ներկայացված դիմումը և Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն են ներկայացնում կարծիք՝ կցելով ծրագրի վերաբերյալ սույն կարգի 8-րդ կետով սահմանված չափորոշիչների գնահատականները:

8. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն գնահատում են ծրագիրը՝ համաձայն գնահատման հետևյալ չափորոշիչների (փակագծերում նշվում է առավելագույն միավորը)՝

1) տնտեսության վրա մուլտիպլիկատիվ ազդեցություն (7).

2) զբաղվածության ընդլայնում և ոլորտի միջին աշխատավարձի չափը (10).

3) նորարարություն և աշխատանքի արտադրողականության բարձրացում (10).

4) արտահանման ուղղվածություն (10).

5) պատշաճ մարքեթինգային քաղաքականություն (6).

6) համաֆինանսավորման առկայություն (սեփականատիրոջ մասնակցությունը նախագծին՝ 50 և ավելի տոկոսով) (5):

9. Ծրագիրը գնահատվում է ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից ներկայացված չափորոշիչների հիման վրա՝ հետևյալ մեթոդաբանությամբ՝

1) տնտեսության վրա մուլտիպլիկատիվ ազդեցությունը գնահատվում է՝ հիմք ընդունելով սույն կարգի N 2 ձևում նշված ցուցանիշները: Առավելագույն գնահատականը՝ 7 միավոր.

2) զբաղվածության ընդլայնում և ոլորտի միջին աշխատավարձի չափը գնահատվում է՝ հիմք ընդունելով սույն կարգի N 2 ձևում նշված ցուցանիշները: Առավելագույն գնահատականը՝ 10 միավոր: Ընդ որում՝

ա. մինչև 30 տոկոս աշխատատեղերի ավելացման դեպքում գնահատվում է 0-3 միավոր,

բ. 30-50 տոկոս աշխատատեղերի ավելացման դեպքում գնահատվում է 4-6 միավոր,

գ. 50 տոկոսից ավելի աշխատատեղերի ավելացման դեպքում գնահատվում է 7-10 միավոր.

3) նորարարություն և աշխատանքի արտադրողականության բարձրացումը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Ընդ որում՝

ա. մինչև 30 տոկոս արտադրողականության բարձրացման դեպքում գնահատվում է 0-3 միավոր,

բ. 30-60 տոկոս արտադրողականության բարձրացան դեպքում գնահատվում է 4-6 միավոր,

գ. 60 տոկոսից բարձր արտադրողականության բարձրացան դեպքում գնահատվում է 7-10 միավոր: Նոր արտադրության ստեղծման դեպքում նշված ցուցանիշները համեմատվում են տվյալ ճյուղի միջին արտադրողականության հետ.

4) արտահանման ուղղվածությունը գնահատվում է՝ հիմք ընդունելով սույն կարգի N 2 ձևում նշված ցուցանիշները: Առավելագույն գնահատականը՝ 10 միավոր: Ընդ որում՝

ա. մինչև 30 տոկոս արտադրանքի արտահանման դեպքում գնահատվում է 0-3 միավոր,

բ. 30-60 տոկոս արտահանման դեպքում՝ 4-6 միավոր,

գ. 60 տոկոսից բարձր արտահանման դեպքում՝ 7-10 միավոր.

5) պատշաճ մարքեթինգային քաղաքականությունը գնահատվում է՝ հիմք ընդունելով սույն կարգի N 1 ձևում նշված ցուցանիշները: Առավելագույն գնահատականը՝ 6 միավոր.

6) համաֆինանսավորման առկայությունը (սեփականատիրոջ մասնակցությունը նախագծին՝ 50 և ավելի տոկոսով) գնահատվում է՝ հիմք ընդունելով սույն կարգի N 1 ձևում նշված ցուցանիշները: Առավելագույն գնահատակը՝ 5 միավոր:

10. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը, կարծիքներն ստանալուց հետո 7-օրյա ժամկետում, պատրաստում է եզրակացություն՝ ամփոփելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարծիքներն ու ծրագրի գնահատման արդյունքները:

11. Ծրագրի գնահատման արդյունքներն ամփոփվում են՝ հաշվի առնելով յուրաքանչյուր չափորոշչի միջին թվաբանական արդյունքը:

12. Ամփոփման արդյունքում 26 և ավելի միավոր ստացած ծրագրերի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, իսկ դրանից պակասի վերաբերյալ՝ բացասական եզրակացություն:

13. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը դրական կամ բացասական եզրակացության հիման վրա մշակում է Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման նախագիծ և այն ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ:

14. Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը դրա մասին տեղեկացնում է ռեզիդենտ շահութահարկ վճարողին, որի հիման վրա Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և ռեզիդենտի միջև կնքվում է գործարար ծրագրի իրականացման և մոնիթորինգի համակարգի մասին պայմանագիր՝ համաձայն N 3 ձևի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ձև N 1

Գ Ո Բ Ծ Ա Բ Ա Բ Ծ Բ Ա Գ Ի Բ

1. Հակիրճ տեղեկատվություն ռեզիդենտ շահութահարկ վճարողի գործունեության մասին

1.	Ռեզիդենտ շահութահարկ վճարողի անվանումը			
2.	Գտնվելու վայրը, կոնտակտային տվյալները			
3.	Կազմակերպաիրավական ձևը			
4.	Ուղղվածությունը/գործունեության բնագավառը			
5.	Ծրագրի համար առկա/անհրաժեշտ տարածքները		Առկա տարածք	Անհրաժեշտ տարածք
		Հողատարածք		
		Շենքեր և շինություններ		
		Այլ		
6.	Սեփականության ձևը, այդ թվում՝ բաժնետերեր՝ ըստ բաժնեմասի			
		1.		
		2.		
		3.		
		4.		
7.	Հիմնադրման տարեթիվը	Գործունեության մեկնարկի ժամկետները		
8.	Ծրագրի նպատակը/ տեղեկատվություն			

	իրականացվող ծրագրի մասին	
9.	Մարքեթինգային քաղաքականության նկարագրությունը	
10.	Գործընկերները	
11.	Նորարարություն	
12.	Ծրագրին վերաբերող այլ տեղեկություններ (անհրաժեշտության դեպքում)	

2. Ներդրումներ

NN ը/կ	Ուղղվածությունը	Սեփական միջոցները	Այլ միջոցներ
	1	2	3
1.			
2.			
3.			
	Ընդհանուր ներդրումներ		

N 1 ձևի լրացման ուղեցույց

1. 1-ին՝ «Հակիրճ տեղեկատվություն ռեզիդենտ շահութահարկ վճարողի գործունեության մասին» բաժնի՝

1) 5-րդ տողում նշվում են ծրագրի համար առկա/անհրաժեշտ տարածքների չափերը՝ քառ. մետր չափի միավորով.

2) 6-րդ տողում առանձին տողով նշվում է սեփականության ձևը, իսկ մնացած տողերում՝ 15 տոկոս և ավելի բաժնետեր հանդիսացող անձանց անունները (ռեզիդենտ շահութահարկ վճարողի՝ կազմակերպություն հանդիսանալու դեպքում).

3) 7-րդ տողում նշվում է ռեզիդենտի պետական գրանցման, իսկ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու տարեթիվը.

4) 8-րդ տողում տեքստային տարբերակով նկարագրվում է ծրագրի նպատակը, որում կատարվում է նշում նաև արդեն իսկ իրականացված և անհրաժեշտ աշխատանքների, ինչպես նաև դրանց ժամկետների մասին.

5) 9-րդ տողում տեքստային տարբերակով նկարագրվում է իրականացվող և նախատեսվող մարքեթինգային քաղաքականությունը՝ նշելով նաև դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների մասին.

6) 10-րդ տողում տեքստային տարբերակով նշվում է ծրագրի գործունեության արդյունքի իրացման առկա և հնարավոր գործընկերների մասին՝ պայմանագրերի կամ պայմանավորվածությունների առկայության դեպքում.

7) 11-րդ տողում տեքստային տարբերակով ներկայացվում է ծրագրի գործունեության արդյունքում նորամուծությունների ներդրումը.

8) 12-րդ կետում անհրաժեշտության դեպքում տեքստային տարբերակով ներկայացվում են ծրագրին վերաբերող այլ տեղեկություններ:

2. N 1 ձևում լրացվող աղյուսակներում բացակայող տեղեկատվության դեպքում դրվում է «-» նշանը:

Ձև N 2

Տեղեկատվություն ռեզիդենտ շահութահարկ վճարողի տնտեսական գործունեության մասին

NN ը/կ	1	2	3	4	5	6	7	8	9
1.	Ցուցանիշ	20__ թ.	20__ թ.	20__ թ.	20__ թ.	20__ թ.	20__ թ.	20__ թ.	20__ թ.
2.	Արտադրանք								
3.	Իրացում								
4.	Արտահանում								
5.	Արտահանման երկրներ								
6.	Աշխատողների միջին տարեկան քանակ								
7.	Միջին տարեկան աշխատավարձ								
8.	Արտադրողականություն								
9.	ԱԱՀ								
10.	Շահութահարկ								
11.	Եկամտային հարկ								

N 2 ձևը լրացնելու ուղեցույց

1. 1-ին՝ «Տեղեկատվություն ռեզիդենտ շահութահարկ վճարողի տնտեսական գործունեության մասին» բաժնի՝

1) 2-րդ, 3-րդ և 4-րդ սյունակներում նշված տեղեկատվությունը լրացվում է դիմումը ներկայացնելուն նախորդող երկու տարվա համար, իսկ հաջորդ սյունակներում արտացոլվում են կանխատեսվող տարիները՝ մինչև ծրագրի ավարտն ընկած ժամանակահատվածի համար.

2) 2-րդ, 3-րդ, 4-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ տողերի չափի միավորն է հազ. դրամը:

2. N 2 ձևում լրացվող աղյուսակներում բացակայող տեղեկատվության դեպքում դրվում է «-» նշանը:

Ձև N 3

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

քաղ. Երևան _____ _____20 թ.

Հայաստանի Հանրապետությունը, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն), ի դեմս նախարար՝_____, մի կողմից, և _____, ի դեմս _____ (այսուհետ՝ կազմակերպություն), մյուս կողմից (նախարարությունը և կազմակերպությունը միասին հիշատակելու դեպքում, այսուհետ՝ կողմեր) հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N -Ն որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Պայմանագրով կազմակերպությունը պարտավորվում է կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N -Ն որոշմամբ հավանության արժանացած գործարար ծրագրով (այսուհետ՝ ծրագիր) նախատեսված աշխատանքները, իսկ նախարարությունը պարտավորվում է իր իրավասությունների շրջանակներում աջակցել ընկերությանը՝ ծրագրի իրականացման գործընթացում:

2. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

2.1. Նախարարությունը պարտավոր է՝

2.1.1. կատարել ծրագրի իրականացման մոնիթորինգ:

2.2. Նախարարությունն իրավունք ունի՝

2.2.1. կատարելու կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի նկատմամբ վերահսկողություն.

2.2.2. կազմակերպությունից պահանջելու ներկայացնել պայմանագրի 3.6-րդ կետով սահմանված հաշվետվությունները:

2.3. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.3.1. _____ .

2.3.2. _____ .

2.3.3. հարկային պարտավորություններն ավելացնել աշխատողների թվի և արտադրանքի իրացման ծավալների ավելացմանը համապատասխան.

2.3.4. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ տրված ցուցումները.

2.3.5. իրականացնել ծրագրով նախատեսված այլ անհրաժեշտ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.4.1. ինքնուրույն որոշելու ծրագրի իրականացման մեխանիզմները.

2.4.2. ծրագրի իրականացմանը ներգրավելու այլ կազմակերպություններ և անհատ փորձագետներ, որոնց կողմից իրականացվող աշխատանքների որակի պատասխանատվությունը կրում է կազմակերպությունը:

3. Հաշվետվություն և մոնիթորինգ

3.1. Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացվում է մոնիթորինգ:

3.2. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ, ինչպես նաև ուսումնասիրել կազմակերպության կողմից իրականացված մոնիթորինգը և ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր ու նյութեր:

3.3. Մոնիթորինգի ընթացքում բացահայտված թերացումների և բացթողումների շտկման նպատակով նախարարության կողմից ընկերությանը տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարության կողմից իրականացվող մոնիթորինգի ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.5. Մոնիթորինգն իրականացվում է ծրագրով ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը գնահատելու նպատակով:

3.6. Կազմակերպությունը յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ ներկայացնում է հաշվետվություններ (տեքստային և ֆինանսական)՝ յուրաքանչյուր ժամանակահատվածին հաջորդող ամսվա 10 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Եթե կազմակերպությունը չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում պայմանագրով և ծրագրով սահմանված պարտավորությունները, խուսափում է նախարարության վերահսկողությունից, ապա նախարարությունն իրավունք ունի միակողմանի լուծելու պայմանագիրը և Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելու Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արտոնության կասեցման վերաբերյալ համապատասխան որոշման նախագիծ: Ընդ որում, անկախ մոնիթորինգի արդյունքներից՝ պայմանագրի գործողությունը դադարեցվում է նաև այն դեպքում, երբ պետական մարմինների կողմից օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում ստացվում է հիմնավորված տեղեկատվություն՝ ներդրումային ծրագիր իրականացնող կազմակերպության հարկերի և այլ պարտադիր վճարների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

4.2. Կողմերը համաձայնում են պայմանագրի շուրջ ծագող տարաձայնությունները կարգավորել բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև ծրագրի պատշաճ իրականացման ավարտը:

5.2. Ծրագիրը համարվում է կատարված՝ պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման դեպքում:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

7.2. Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.3. Պայմանագիրը կնքված է հայերենով՝ 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: